

**ՏՈՒՐԻԶՄԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Էլոյան Նարեկ

*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտ, Հայաստան*

Համառոտ ներածական: Կրթական համակարգում ֆիզիկական դաստիարակության գործընթացի կատարելագործումը՝ ուղղված դպրոցականների շարժողական պատրաստվածության և առողջության բարելավմանը, նախատեսում է ժամանակակից նորարական տեխնոլոգիաների կիրառումը, բովանդակության հարստացումը: Ֆիզիկական դաստիարակության անձնային կողմնորոշիչ մոտեցումը որոշվում է դպրոցականների դրդապատճառապահանջմունքային դիրքորոշմամբ: Եվ այդ պահանջմունքների բավարարման միջոցներից մեկը տուրիստական պատրաստությունն է:

***Բանալի բառեր** - Հանրակրթության համակարգ, դպրոցականներ, ֆիզիկական դաստիարակություն, տուրիստական պատրաստություն:*

Հիմնախնդիրը: Հանրահայտ է, որ անձի տարբեր դրսևորումների և սոցիալական գործառույթների իրականացման կարևորագույն նախապայման է առողջական վիճակը, աշխատունակության և շարժողական պատրաստության մակարդակը՝ ձեռք բերված ռացիոնալ կազմակերպված ֆիզիկական դաստիարակության գործընթացի պայմաններում: Այդ պարագայում առավել նշանակություն է ստանում դպրոցականների ֆիզիկական դաստիարակության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը, որն ուղղված է ապահովելու ֆիզկուլտուրային կրթությունը, առողջության բարելավումը, ներդաշնակ ֆիզիկական զարգացումը, բազմակողմանի շարժողական պատրաստությունը:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Գիտական աղբյուրների վերլուծությունից ակներև է, որ դպրոցական տարիքում շարժողական ակտիվության ապահովումն օրգանիզմի զարգացման, ֆունկցիոնալ կարողությունների բարելավման և հարմարողականության բարձրացման կարևորագույն պայման է [8, էջ 53-54]: Հետազոտության տվյալները վկայում են ժամանակակից դպրոցականների շարժողական ակտիվության ցածր ծավալի մասին, ինչը բացասաբար է անդրադառնում նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության վրա [10, էջ 11-

12]: Համաձայն մի շարք հեղինակների տվյալների՝ դպրոցում ուսանելու ընթացքում առողջ երեխաների թիվը նվազում է գրեթե չորս անգամ. կեցվածքի շեղում է ախտորոշվում աշակերտների 65 %-ի մոտ, կարճատեսությամբ տառապող երեխաների թիվը աճում է մինչև 50 %, իսկ նյարդահոգեկան խանգարումներն աճում են դպրոցականների 40 %-ի մոտ [4, էջ 4,5]: Մասնագետների կարծիքով հանրակրթական դպրոցում միայն ֆիզիկական կուլտուրայի դասերի միջոցով հնարավոր չէ լուծել առողջարարական խնդիրները [6, էջ 13-14]: Դպրոցականների անբավարար առողջական վիճակի մասին բերված փաստերը խոսում են այն մասին, որ այսօր անհրաժեշտություն է առաջացել մշակելու և կրթական համակարգ ներդնելու նորարարական տեխնոլոգիաներ և մեթոդիկաներ, որոնք կապահովեն բարձր առողջարարական արդյունք, կնպաստեն դպրոցական համակարգի ֆիզիկական դաստիարակության գործընթացի օպտիմալացմանը:

Եվ այս տեսանկյունից տուրիզմը կարող է դիտարկվել այն եզակի միջոցը, որն ապահովում է դպրոցականների օրգանիզմի կոփումը, ֆունկցիոնալ վիճակի բարելավումը, ֆիզիկական պատրաստությունը և դրա հետ մեկտեղ նպաստում է շրջակա միջավայրի ու պատմական վայրերի ուսումնասիրմանը, անձի բարոյականային և հայրենասիրական, գեղագիտական ու աշխատանքային դաստիարակությանը [9]: Այդ կապակցությամբ կարելի է նշել նաև, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 12-ի № 122-Ն որոշումը՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից մշակվել է սպորտային զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, որը ծառայում է որպես հանրապետությունում սպորտային զբոսաշրջության զարգացմանն ուղղորդող միջոց: Այդ հայեցակարգի իրականացմանն ուղղություններից մեկը տուրիստական պատրաստության ապահովումն է հանրակրթական դպրոցում:

Տուրիստական պատրաստության կարևորությունը՝ որպես դպրոցականների ուսուցման և դաստիարակության համալիր միջոց, մատնանշում է նաև նրա ներգրավումը կրթական համակարգ:

Դեռևս XIX դարի երկրորդ կեսերին հայ լուսավորիչ և մանկավարժ Խ. Աբովյանը մեծ դեր է հատկացրել արշավներին երեխաների դաստիարակության գործում: Մ. Սանթրոսյանը նշել է, որ Խ. Աբովյանը կողմնակից էր փոքր տարիքից երեխաների օրգանիզմը կոփելուն, ամեն տեսակ պայմաններին սովորեցնելուն [2, էջ 200]: «Հայտնի է, թե Խ. Աբովյանը ինչպես էր հաճախակի աշակերտների հետ կազմակերպում զբոսանքներ, էքսկուրսիաներ, հեռավոր ճա-

նապարհորդություններ, որոնք, բացի ընդհանուր դաստիարակչական ու կրթական նշանակությունից, հետապնդում էին նաև ֆիզիկական դաստիարակության խնդիրներ [2, էջ 201]:

Գրական աղբյուրների ուսումնասիրությունը, ինչպես նաև տարբեր երկրների հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրերի վերլուծությունը թույլ տվեց արձանագրել, որ տուրիստական պատրաստությունն ընդգրկված է մի շարք երկրների դպրոցական համակարգում: Օրինակ՝ Ավստրիայում դպրոցականների տուրիստական պատրաստությունը իրականացվում է արտադասարանական պարապմունքների ձևով, Ֆինլանդիայի, Ճապոնիայի դպրոցներում սովորողների համար որպես ակտիվ հանգիստ նախատեսվում է արշավների կազմակերպում, որոնք կրում են շեշտադրված առողջարարական բնույթ: Ռուսաստանի հանրակրթական դպրոցի ավագ դասարաններում տուրիստական պատրաստությունն ընդգրկված է որպես ծրագրի ընտրովի նյութի բաղադրիչ [7, էջ 10-14, 31-34]: Վերջին տարիներին կատարված հետազոտությունները ներկայացնում են տուրիզմի տարրերի ընդգրկման դրական փորձը տարրական դպրոցի աշակերտների ֆիզիկական դաստիարակության գործընթացում [5, 11], Մ. Վ. Բալչիրբայի կողմից 5-8-րդ դասարանի աշակերտների համար մշակվել է սպորտային տուրիզմի ծրագիր, որը իրականացվում է արտադասարանական պարապմունքների ձևով [3, էջ 144-145]:

Հարկ է նշել, որ Խորհրդային Միության հանրակրթական դպրոցների ֆիզիկական դաստիարակության ծրագրերում նույնպես նախատեսված էր սովորողների տուրիստական պատրաստության ապահովումը: Այսպես, 1986 և 1987 թթ. ծրագրերում այն ներկայացված է եղել արտադասարանական պարապմունքների ձևով՝ 5-11-րդ դասարանների աշակերտների համար: 1975 թ. ծրագրի ընտրովի նյութի բովանդակության մեջ 7-11-րդ դասարաններում հատկացված էր 16 ժամ՝ երթ-արշավ անցկացնելու համար:

Տուրիզմը՝ որպես դպրոցականների առողջության ամրապնդման, անհրաժեշտ կարողությունների ձևավորման, բարձր շարժողական պատրաստության ապահովման կարևոր միջոց, ընդգրկված էր նաև ՊԱՊ համալիրի պահանջներում, որը կազմում էր սովետական ֆիզիկական դաստիարակության համակարգի ծրագրանորմատիվային հիմքը:

Ներկայումս Հանրապետության պետական կրթական փաստաթղթերում տուրիստական պատրաստությունն արտացոլված է ավագ դպրոցի և բուհի ֆիզիկական դաստիարակության ծրագրերում: Սակայն դիտումները ցույց են տալիս, որ գործնականում այն լիովին չի իրականացվում, ակնհայտ են բազում

պատճառներ. պատճառներից մեկն էլ այն է, որ տուրիստական պատրաստության կազմակերպման և անցկացման համար այժմ բացակայում են գիտամեթոդական հիմնավորված մշակումներ: Դրա հետ մեկտեղ պետք է փաստել, որ բաց է մնացել միջին դպրոցը, իսկ հենց այդ տարիքում տուրիստական պատրաստությունը կարող է էական դեր ունենալ անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար:

Վերը նշվածը պահանջում է մշակել նոր մոտեցումներ, որոնք կնպաստեն տուրիստական պատրաստության լիարժեք իրականացմանը՝ դրանով ապահովելով դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացի կատարելագործումը:

Այսպիսով՝ ակնհայտ է հակասություն, որն արտահայտվում է.

1. դպրոցականների առողջացման արդի հիմնախնդիրների և տուրիզմի հնարավորությունների ոչ լիարժեք օգտագործման միջև,

2. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի «Տուրիստական պատրաստություն» բաժնում նյութի առկայության և գիտամեթոդական գրականության մեջ վերջինիս դասավանդման մեթոդիկայի ոչ լիովին մշակման միջև:

Հիմնահարցի արդիականությունն ընդգծվում է նաև այն հանգամանքով, որ տուրիստական պատրաստությունը ընդգրկված չէ հանրակրթական դպրոցի բոլոր տարիքային խմբերում, և մշակված չէ դրա բովանդակությունը:

Հետևաբար, հանրակրթական դպրոցում «Տուրիստական պատրաստություն» ուսումնական բաժնի իրականացման մեթոդիկայի մշակումն ունի գիտագործնական կարևոր նշանակություն:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել ֆիզիկական դաստիարակության գործընթացում դպրոցականների տուրիստական պատրաստության իրականացման մանկավարժական պայմանները:

Հետազոտության նորույթը: Ներկայացված են հանրակրթական դպրոցի միջին դասարաններում տուրիստական պատրաստության իրականացման հնարավորությունները:

Հիմնական նյութի շարադրանքը: Տուրիստական պատրաստության արդյունավետ իրագործումը դպրոցականների ֆիզկուլտուրային կրթության համակարգում նախատեսում է մշակել որոշակի տեխնոլոգիա, որը ներկայացված է նկարում:

Տուրիզմի բազմակողմանի ներգործությունը դպրոցականների վրա պայմանավորված է առողջարարական, կրթական, դաստիարակչական և կիրառական նշանակությամբ:

Տուրիզմի առողջարարական նշանակությունը առաջին հերթին պայմանավորված է օրգանիզմի բոլոր ֆունկցիաների վրա բնության բնական գործոնների բարենպաստ ազդեցությամբ: Շարժողական ակտիվության բարձրացումը նպաստում է նյութափոխականության բարելավմանը, ֆունկցիոնալ կարողությունների և աշխատունակության բարձրացմանը, շարժողական ընդունակությունների բազմակողմանի մշակման ապահովմանը:

Տուրիզմի կրթական նշանակությունն այն է, որ արշավների ժամանակ ամրապնդվում են դպրոցականների գիտելիքները աշխարհագրությունից, պատմությունից, կենսաբանությունից, հայրենագիտությունից, ձեռք են բերվում նոր գիտելիքներ, ձևավորվում ու կատարելագործվում են շարժողական ընդունակություններն ու հմտությունները: Այդ իսկ պատճառով տուրիստական արշավները մեծապես նպաստում են միջառարկայական կապերի զարգացմանը:

Տուրիզմի կիրառական նշանակությունն այն է, որ արշավների ժամանակ ձևավորվում են կյանքի համար կարևոր գիտելիքներ ու կարողություններ: Վերջիններս ներառում են բովանդակությամբ ու ձևով տարբեր շարժողական գործողություններ՝ տեղանքի տարբեր պայմաններում տեղաշարժվել, հաղթահարել բնական խոչընդոտները, կողմնորոշվել քարտեզի ու կողմնացույցի օգնությամբ, կազմակերպել գիշերակաց, ցանկացած պայմաններում խարույկ վառել, սնունդ պատրաստել դաշտային տարբեր պայմաններում, անհրաժեշտ օգնություն ցուցաբերել այրվելիս, սառչելիս կամ արևահարվելիս, միջատների, օձերի խայթոցից կամ այլ վնասվածքների դեպքում:

Տուրիզմի դաստիարակչական նշանակությունը պայմանավորված է անձի բազմակողմանի զարգացմամբ, դաստիարակության բոլոր կողմերի փոխներգործությամբ: Արշավների ժամանակակ դպրոցականների մոտ դաստիարակվում է կազմակերպվածություն, գիտակցական կարգապահություն և հաստատակամություն, ձևավորվում են դժվարությունները հաղթահարելու կարողություն, ընկերասիրություն, փոխօգնություն, կոլեկտիվիզմի զգացում:


Տուրիստական պատրաստության կազմակերպումը նպատակահարմար է իրականացնել ինչպես ֆիզիկական կուլտուրայի դասերի ժամանակ՝ առարկայի չափորոշիչ ծրագրի ընտրովի նյութին հատկացված ժամերի շրջանակում, այնպես էլ սեկցիոն պարապմունքների միջոցով՝ շաղկապելով հանրակրթա-

կան դպրոցի ֆիզիկական դաստիարակության կազմակերպման դասային և արտադասարանական ձևերը [1]:

Ֆիզկուլտուրային կրթության պահանջներից ելնելով, հիմնվելով անձնային կողմնորոշիչ մոտեցման վրա, հաշվի առնելով աշակերտների տարիքային զարգացման առանձնահատկությունները ու հետաքրքրությունները, հանրապետության բնակլիմայական պայմանները՝ դպրոցական տարիքում տուրիզմի առավել իրատեսական ձևերն են հետիոտն, դահուկային և հեծանվային արշավները:

Եզրակացություններ, հետագա հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ: Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ գիտամեթոդական գրականության վերլուծությունը և դպրոցական ծրագրերի ուսումնասիրումը թույլ տվեցին առանձնացնել, որ տուրիստական պատրաստությունն ընդգրկված է մի շարք երկրների դպրոցական համակարգում մի դեպքում արտադասարանական պարապմունքների ձևով, մյուս դեպքում՝ որպես ծրագրի ընտրովի նյութի բաղադրիչ: Դրա հետ մեկտեղ պետք է փաստել, որ առկա են մի շարք հարցեր՝ կապված հանրակրթական դպրոցում տուրիստական պատրաստության իրականացման հետ, որոնք արդիական են և լուծման կարիք ունեն:

Կարևորելով դպրոցականների տուրիստական պատրաստության ապահովումը՝ հետագա հետազոտություններն ուղղված կլինեն 7-9-րդ դասարանների աշակերտների համար տուրիստական պատրաստության բովանդակության ու դասավանդման մեթոդիկայի մշակմանը և ներդրմանը ֆիզիկական դաստիարակության գործընթաց:



Նկար. Տուրիստական պատրաստության իրականացման տեխնոլոգիան հանրակրթական դպրոցում

Օգտագործած գրականության ցանկ

1. Դավթյան Ռ. Բ., «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի ընտրովի նյութի դասավանդումը և կատարելագործման մեթոդիկան: Մեղմագ., առ., մ.գ.թ., Երևան, 2018, 22 էջ:
2. Սանթրոսյան Մ., *Խաչատուր Աբովյանը հայ նոր մանկավարժության հիմնադիր*. Գրական-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1948, Գ. 3. էջ 173-204:
3. Балчирбай М. В., Спортивно-оздоровительный туризм в школе // Вестник академии детско-юношеского туризма и краеведения. Киров: Радуга-ПРЕСС.- 2017.- С144-151.
4. Калюжный Е.А., Исследование уровня физического здоровья учащихся сельской и городской начальных школ // Детский тренер, 2007, № 1, с. 4-17.
5. Климанова Т.Г., Туризм на уроках с младшими школьниками // Физическая культура в школе, М., 2007, № 2, С. 21-24.
6. Лукьяненко В.П., Основные заблуждения в понимании проблем школьной физической культуры // Физическая культура в школе, 2012, № 3, с. 13-17.
7. Лях В.И., Зданевич А.А., Комплексная программа физического воспитания учащихся 1-11 классов, М., НИИ возрастной физиологии РАО, 2004, 124с.
8. Матвеев А.П, К проблеме содержания образования по физической культуре в контексте требований стандарта второго поколения // Теория и практика физической культуры, 2009, №6, с. 53-57.
9. Ривкин Е.Ю., Организация туристической работы со школьниками: Практи. пособие / Е.Ю. Ривкин, М., Аркти, 2001, 77 с.
10. Спирин В.К., Вязанко М.В., Макарова Н.А., Индивидуальный подход как один из важнейших принципов модернизации базового курса физического воспитания в общеобразовательной школе // Физическая культура: воспитание, образование, тренировка, 2007, № 1, с.11-13.
11. Чахнина М.С., Содержание и направленность регионального компонента программы по физической культуре в младших классах на основе средств туризма: автореф. дис. ... канд. пед. наук, Тамбов, 2008, 22 с.

ТУРИЗМ В СИСТЕМЕ ФИЗКУЛЬТУРНОГО ОБРАЗОВАНИЯ ШКОЛЬНИКОВ

Элоян Нарек

*Государственный институт физической культуры и спорта Армении,
Армения*

Аннотация

Совершенствование процесса физического воспитания в системе общего образования, направленное на укрепление здоровья и повышение двигательной подготовленности, предусматривает использование новейших технологий, расширение его содержания. Личностно-ориентированный подход к физическому воспитанию определяется мотивацией и потребностью школьников. Одним из средств удовлетворения потребности в двигательной активности является туризм. Многостороннее влияние туризма на школьников обусловлено его оздоровительным, образовательным, воспитательным и прикладным значением.

В настоящее время в республике туристическая подготовка отражена в программах по физическому воспитанию в старшей школе и в ВУЗе. Вместе с тем наблюдения показывают, что на практике этот раздел программы почти не реализуется, одной из причин является отсутствие научно-методических разработок для его организации и проведения. В то

же время следует отметить, что в программу основной школы дисциплина «туристическая подготовка» не включена, хотя в средних классах она может играть важную роль во всестороннем и гармоничном воспитании личности.

Изложенное выше указывает, что необходимо разработать новые подходы, которые будут способствовать туристической подготовке, обеспечив тем самым совершенствование процесса физического воспитания школьников. Подчеркивая значимость туристической подготовки школьников, дальнейшие исследования будут направлены на разработку содержания и методики преподавания туризма для учащихся 7-9-ых классов и его внедрения в процесс школьного физического воспитания.

Ключевые слова: *система общего образования, школьники, физическое воспитание, туристическая подготовка.*

TOURISM IN THE PHYSICAL EDUCATION SYSTEM OF SCHOOLCHILDREN

Eloyan Narek

*Armenian State Institute of Physical Culture and Sport,
Armenia*

Summary

Improving the process of physical education in the education system, which is aimed at improving students' mobility and health, provides the use of modern technologies and the content enrichment. The individual orientation approach to Physical education is determined by the students' motivation and needs. And one of the ways to meet these needs is the touristic preparation. The multifaceted impact of tourism on schoolchildren is conditioned by their health, educational and practical importance. Currently, in state education documents touristic preparation is reflected in physical education programs of high schools and higher educational institutions. However, the observations show that it is not fully implemented in practice and there are many obvious reasons for this, and the one being the fact that for its organization and implementation there are currently no scientifically-approved methodological developments. At the same time, it should be stated that the secondary school is left out, and it is at this age that touristic preparation can play an essential role in the comprehensive development of the individual. The above-mentioned requires the development of new approaches that will promote the full development of touristic preparation, thereby providing the improvement of the process of physical education of schoolchildren. Emphasizing the importance of providing students with touristic preparation, further research will focus on the content and teaching methods of physical education in 7-9 grades.

Keywords: *General education system, schoolchildren, physical education, tourist preparedness.*

References:

1. Davtyan R. B., Optional material of teaching methodology and improvement in the subject of physical education. Thesis, PhD - Yerevan, 2018. p. 22.
2. Santrosyan M., Khachatur Abovyan, founder of new Armenian pedagogy. Literary and philological studies, Yerevan, 1948, 3. p. 173-204.
3. Balchirbay M. V., Sport and school tourism at school. Newspaper of the Academy of Children and Youth Health Tourism and Travel. Kirov, "Rainbow-Press" . - 2017.- p 144-151.
4. Kalyuzhnyi Y. A., Research of the level of physical health of pupils of rural and urban primary schools. // Children's coach.-2007.- № 1, p. 4-17.

5. Klimanova T. G., Tourism at lessons with the primary schoolchildren // Physical culture at school. - M. - 2007. - № 2. - p. 21 - 24.
6. Lukyanenko V. P., Main misconceptions in understanding the problems of school physical culture // Physical culture at school. - 2012.- N3.- P.13-17.
7. Lyakh V. I., Zdanevich A. A., The complex program of physical education of pupils of 1-11 classes. - M.: Research Institute of Age Physiology of RAO, 2004.- p.124.
8. Matveev A. P., To the problem of the content of education on physical culture in the context of the requirements of the second generation standard: // Theory and practice of physical culture. - — 2009. - — №6. - — p. 53–57.
9. Rivkin E. Yu., Organization of tourist work with schoolchildren: Practical manual / E.Yu. Rivkin. - M.: Arkti, 2001. - p. 77.
10. Spirin V. K., Vyazanko M. V., Makarova N. A., Individual approach as one of the most important principles of modernization of basic course of physical education in general education school // Physical culture: education, training. 2007. - N1.- p.11-13.
11. Chakhnina M. S., The content and orientation of the regional component of the program on physical education for juniors. Tambov, 2008. p. 22.

Материал был представлен и отправлен на рецензию: 24.03.2020

Принято к публикации: 28.04.2020

Рецензент: доктор пед.наук, проф. Ашот Чатинян

The material was submitted and sent to review: 24.03.2020

Was accepted for publication: 28.04.2020

Reviewer: Doctor of Sciences, Prof. Ashot Chatinyan

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Հակոբյան Գրետա

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան, Հայաստան*

Համառոտ ներածական: Հաղորդակցման հմտություններն ուսուցչի մասնագիտական կոմպետենտության անհրաժեշտ բաղադրիչ են, որի ձևավորման համար առանցքային են հաղորդակցման ձևերի, միջոցների և հնարների տիրապետումն ու շարունակական կատարելագործումը: Մանկավարժորեն նպատակահարմար հաղորդակցումը նպաստում է սովորողների ուսումնական դրդապատճառների ձևավորմանը, ընդունակությունների բացահայտմանն ու դրսևորմանը, ուսումնական գործընթացում ակտիվ ներգրավմանը, մտազործունեության ակտիվացմանը, հոգեմտավոր կարողությունների զարգացմանը: